

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**  
**Գույքի վարձակալության մասին**

ք. Երևան

----- 2008թ.

Մի կողմից -----." ՍՊԸ-ն, հետագայում՝ Վարձակալ, ի դեմս տնօրեն -----ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, և մյուս կողմից ՀՀ քաղաքացի -----ը (անձնագիր -----), հետագայում՝ Վարձատու, մյուս կողմից, (հետագայում՝ Վարձատուն և Վարձակալը միասին կանվանվեն Կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**I. Պայմանագրի առարկան**

- 1.1. Սույն պայմանագրով Վարձատուն վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանն է հանձնում սեփականության իրավունքով իրեն պատկանող սույն պայմանագրի 1.2. կետում նշված գույքը (այսուհետ՝ Գույք):
- 1.2. Գույքը ներառում է՝
  - ա) -----
  - բ) -----
- 1.3. Գույքը հանձնելու և վերադարձնելու ժամանակ Կողմերը կազմում են հանձնման-ընդունման ակտ:
- 1.4. Գույքը գտնվում է -----:
- 1.5. Գույքը վարձակալության ընթացքում օգտագործվելու է -----ի համար:
- 1.6. Վարձակալության ժամկետ է սահմանվում -----ը:

**II. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

- 2.1. Վարձատուն իրավունք ունի՝
  - ա) Վարձակալից պահանջել Գույքը օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան.
  - բ) հսկողություն իրականացնել Վարձակալի կողմից Գույքի օգտագործելու նկատմամբ.
  - գ) եթե Վարձակալը Գույքը օգտագործում է պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը անհամապատասխան, պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները:
- 2.2. Վարձակալը իրավունք ունի՝
  - ա) Գույքը օգտագործել Գույքի գտնվելու վայրում և իր նշանակությանը համապատասխան,
- 2.3. Վարձակալը պարտավոր է՝
  - ա) ժամանակին վճարել վարձավճարը սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված կարգով և պայմաններով.
  - բ) սույն պայմանագրի ամբողջ ժամկետի ընթացքում ապահովել Գույքի պատշաճ վիճակը.
  - գ) իր ուժերով իրականացնել Գույքի կառավարումը (օգտագործումը), ինչպես նաև դրա առևտրային և տեխնիկական շահագործումը.

### III. Վարձավճար

- 3.1. Սույն պայմանագրով Գույքի վարձավճարը սահմանվում է ամսական ----- ՀՀ դրամ: Նշված գումարից Վարձակալը պահում է օրենսդրությամբ սահմանված եկամտահարկը և գուտ գումարը վճարում է Վարձատուին:
- 3.2. Սույն պայմանագրի 3.1. կետում նշված վարձավճարը Վարձակալը վճարում է Վարձատուին կանխիկ կամ բանկային փոխանցմամբ՝ սույն պայմանագրի ավարտից հետո՝ ----- ընթացքում, կամ ավելի վաղ՝ կողմերի համաձայնությամբ:

### IV. Այլ պայմաններ

- 4.1. Գույքի միջոցի պատահական կորստի կամ վնասվածքի ռիսկը Վարձակալին անցնում է այն պահից, երբ Վարձատուն համարվում է Գույքը Վարձակալին հանձնելու պարտականությունը կատարած:
- 4.2. Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով երկու հավասարազոր օրինակներից՝ Կողմերից յուրաքանչյուրին մեկական:
- 4.3. Կողմերի վավերապայմաններն են.

Վարձակալ	Վարձատու
"-----" -----	ՀՀ քաղաքացի -----
Գտնվելու վայր-----	Բն. վայր՝ -----
Հ/Հ՝ -----	Անձնագիր -----
ՀՎՀՀ - -----	Սոցիալական քարտ -----
Տնօրեն՝ -	